11.01.2022թ.
348-93

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար
Նարեկ Մկրտչյանին

Տեղեկություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Մկրտչյան,

Համաձայն ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում ենք տրամադրել հետևյալ տեղեկությունները.

1. Քանի՞ տեղեկություն ստանալու հարցում է ստացել Նախարարությունը 2021 թվականի ընթացքում և ստացված հարցումներից քանի՞սն է ստացվել էլեկտրոնային եղանակով (պաշտոնական էլեկտրոնային փոստ, պաշտոնական կայք, e-request համակարգ):
2. Հարցումներից քանի՞սն է ստացվել e-request հարթակի միջոցով:
3. Եթե վարում եք սոցիալական ցանցերի միջոցով ստացված տեղեկություն ստանալու հարցումների վիճակագրություն, ապա խնդրում ենք նշել՝ քանի տեղեկություն ստանալու հարցում է ստացել կառույցը 2021 թվականի ընթացքում սոցիալական ցանցերի միջոցով:
4. Ներառվում են արդյոք սոցիալական ցանցերով ստացված հարցումները հարցումների ընդհանուր վիճակագրության մեջ:
5. Քանի՞ հարցում է մերժել Նախարարությունը 2021 թվականի ընթացում:
6. Մերժված հարցումներից քանի՞սն են մերժվել անձնական տվյալների, քանի՞սը՝ պետական և/կամ ծառայողական գաղտնիքի պաշտպանության կամ օրենքով նախատեսված այլ հիմքերով:
7. Խնդրում ենք տրամադրել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված տեղեկությունների հրապարակման ակտիվ հղում(ներ)ը:

Խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցմանը պատասխանել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում:

Ուշադրություն: Խնդրում ենք հարցմանը պատասխանել բացառապես ***էլեկտրոնային եղանակով:***

Հարգանքով՝
ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյան

Ինֆորմացիայի ազատության կենտրոն (ԻԱԿ)
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի փող. 1/3, 4-րդ հարկ, Հեռ +37491407836, Էլ. հասցե՝ foi@foi.am Կայք՝ www.foi.am